

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ

Աւագանի անունով Կարապետ, ծնած է 10 Մարտ, 1989-ին յԱրարատ: Զաւակն է Եսուրիկ եւ Ծաղկանոյշ Հայրապետեաններու:

1996-2002 տարիներուն նախնական կրթութիւնը ստացած է Արարատի թիւ 1 միջնակարգ դպրոցին մէջ:

1998-2002 տարիներուն ծառայած է Խոր Վիրապի, ապա Արարատ գիւղի Սուրբ Յակոբ եկեղեցիներու մէջ:

2002-2010 տարիներուն ընդունուած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատըրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը:

2010-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Նուհան Արքեպիսկոպոս Մանուկեանի:

2010-2014 տարիներուն պաշտօնավարած է Ժառանգաւորաց վարժարանէն ներս, որպէս քարտուղար եւ հսկիչ:

2010-էն ցայսօր Ժառանգաւորաց վարժարանէն ներս կը դասաւանդէ «Քրիստոնէական», «Վարք Սրբոց», «Եկեղեցական տօներ», «Նոր Կտակարան» առարկաները:

2011-2016 տարիներուն եղած է «Ուխտաւորաց յանձնախումբ»ի անդամ:

2014-ի Յուլիս 27-ին, Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի, վերակոչուելով՝ Տ. Գէորգ Աբեղայ:

2015-2018 տարիներուն Երուսաղէմի Երրայական Համալսարանի մէջ հետեւած է Անգլերէն, Եբրայերէն եւ Արաբերէն լեզուներու դասընթացներուն:

2019-2022 տարիներուն եղած է Յոպպէի Սուրբ Նիկողայոս վանքի եւ Ռամլէի

Սուրբ Գեորգայ վանքի տեսուչ:

2019-2023 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երեւանի պետական համալսարանի Պատմութեան ֆակուլտետը՝ վկայուելով որպէս մագիստրոս: Թէզի նիւթը եղած է «XVII դարուն վանական կեանքի զարթոնքը Հայաստանի մէջ եւ Երուսաղէմի Հայոց Վանքը»:

2018-2023 տարիներուն եղած է Երուսաղէմի Կիւպենկեան Մատենադարանի Տեսուչ:

2023-ի Օգոստոսէն ցայսօր Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչն է:

2023-ի Դեկտեմբեր 29-ին, սատացաւ Վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿՆՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆԻ

Աւագանի անունով Լեւոն, ծնած է 18 Փետրուար, 1987-ին, Արտաշատի շրջանի Նորաշէն գիւղին մէջ: Զաւակն է Տէր Միսիթար Քահանայ եւ Երէցկին Ռոզա Ալոյեաններու:

1994-2004 տարիներուն նախնական կրթութիւնը ստացած է Նորաշէնի Աւետիք Իսահակեանի անուան միջնակարգ դպրոցին մէջ:

1996-2003 տարիներուն ընդունուած եւ գերազանցութեամբ աւարտած է Նորաշէնի Վահէ Մինասեանի անուան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը:

2004-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարան:

2005-2006 թուականներուն, ընդունուած եւ ուսանած է Երեւանի մենեջմենթի համալսարանի իրաւագիտութեան ֆակուլտետին մէջ:

2006-ի Հոկտեմբերին դարձեալ ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարան եւ աւարտած է 2008-ի Յունիս 11-ին:

2007-ին ստացած է Դպրութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի:

2008-2011 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարանի բաժինը:

2009-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանի, ստացած է Ուրար կրեւու իրաւունք:

2011-2015 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Միջեկեղեցական եւ արտաքին յարաբերութեանց գրասենեակի քարտուղար:

2011-2020 տարիներուն դասաւանդած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանէն ներս, որպէս «Կրօն»ի եւ «Վարք Սրբոց»ի ուսուցիչ:

2012-2014 տարիներուն դասաւանդած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանէն ներս, որպէս «Քրիստոնէական»ի եւ «Վարք Սրբոց»ի ուսուցիչ:

2012-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի:

2014-ի Յուլիս 27-ին, Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի, վերակոչուելով՝ Տ. Ներսէհ Աբեղայ:

2014-2020 թուականներուն եղած է Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի գաւազանակիր եւ անձնական քարտուղար:

2014-2017 թուականներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Սիրոն» ամսագրի խմբագրի օգնական:

2015-2018 թուականներուն ուսանած եւ գերազանցութեամբ ավարտած է Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի Հայոց լեզու եւ գրականութիւն բաժինը՝ վկայուելով որպէս մագիստրոս: Թէզի նիւթը եղած է «Ղազար Փարպեցի եւ իր նախորդները»:

2016-2018 թուականներուն եղած է Միաբանական Ընդհանուր Ժողովի Ատենադպիր:

2018-ի Յունուարէն ցայսօր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Սիրոն» ամսագրի գլխաւոր խմբագիրն է:

2018-ի Մայիսին, Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է Տնօրէն Ժողովի անդամ, ապա՝ նոյն ժողովի ատենադպիր: Դարձեալ վերընտրուած է որպէս Տնօրէն Ժողովի եւ Կրօնական Գերագոյն Ատենանի անդամ, ապա նոյն ժողովի Ատենադպիր՝ 2023-ի Մարտ 8-ին:

2018-էն ցայսօր հայցորդ է Երեւանի պետական համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝ Ակադեմիկոս Հրանդ Թամրազեանի անուան Հայ գրականութեան պատմութեան եւ գրականութեան տեսութեան ամպիոնի:

2021-ին եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սուրբ Թէոդորոս Զեռագրատան տեսուչ:

2023-ի Յուլիս 20-էն ցայսօր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանի տեսուչն է:

2023-ի Դեկտեմբեր 29-ին, սատացաւ Վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Հեղինակ է գիտական շուրջ երկու տասնեակ յօդուածներու, մէկ ուղեգրութեան, երեք Կրօնի դասագիրքերու, եւ մէկ աշխատասիրութեան՝ «Օրագրութիւն Սուրբ Տեղեաց, ձեռամբ՝ Տ. Կիրեղ Եպիսկոպոս Գաբրիէանի»:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԱՂԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈԳՉԵԱՆԻ

Աւագանի անունով՝ Թաթուլ, ծնած է 1988 թ. Օգոստոս 15-ին, Տաւուշի մարզի Դիլիջան քաղաքին մէջ: Զաւակն է Գառնիկ եւ Յասմիկ Գոգչեաններու:

Սկզբնական կրթութիւնը ստացած է Դիլիջանի թիւ 8 առողջարանային դպրոցին, ապա թիւ 19 գիշերօթիկ դպրոցին մէջ:

2004-2009 տարիներուն ընդունուած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանը:

2007-ին ստացած է Դպրութեան չորս աստիճանները, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի:

2009-2012 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարանը:

2010-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանի, ստացած է Ուրար կրելու իրաւունք:

2012-2014 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Վիզաներու եւ վկայագրերու գրասենեակի քարտուղար:

2012-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի:

2014-ի Յուլիս 27-ին, Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի, վերակոչուելով՝ Տ. Աղան Աբեղայ:

2014-2015 տարիներուն եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Վիզաներու եւ վկայագրերու գրասենեակի վարիչ:

2016-էն ցայսօր կը վարէ Սուրբ Աթոռոյ Մատակարարութեան պաշտօնը:

2016-ին Երրայեական Համալսարանին մէջ հետեւած է Անգլերէն եւ Երրայերէն լեզուներու դասընթացքներու:

2016-2020 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երրայեական Համալսարանի Քաղաքագիտութեան եւ Պատմութեան բակալաւրիատի բաժինները:

2021-2023 տարիներուն ուսանած եւ գերազանցութեամբ աւարտած է Երրայեական Համալսարանի Միջազգային յարաբերութիւններու Դիւանագիտութեան եւ Անվտանգութեան մագիստրատուրայի բաժնը:

2023-ի Յունուար 23-ին, նշանակուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Դիւանապետ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ: Նոյն թուականին նշանակուած է նաեւ Սուրբ Տեղեաց քարտուղար եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ *Status Quo*-ի յանձնաժողովին մէջ:

2023-ի Մարտ 8-ին, Ս. Աթոռոյ Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է որպէս Տնօրէն Ժողովի եւ Կրօնական Գերագոյն Ատեանի անդամ:

2023-ի Դեկտեմբեր 29-ին, սատացաւ Վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

